ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ՀԱՅԿԱԶԻ ՔՈՉԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ
И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

КОЧАР КАРИНЕ АЙКАЗОВНА

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОГО РАЗВИТИЯ АРХИТЕКТУРЫ МУЗЕЕВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по
специальности 18.00.01 - “Архитектура и архитектурный дизайн”

ЕРЕВАН 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Ա. Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գրիգորյան

ճարտ. թեկնածու, պրոֆեսոր Ա.Ա. Ալոյան

Առաջատար կազմակերպություն՝ Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. հուլիսի 11-ին, ժամը 14^{00}-ին ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՀ-ի «Ճարտարապետություն և շինարարություն» 030 մասնագիտական խորհրդում. հասցե՝ 0009,ք.Երևան, Տերյան փ.,105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում. հասցե՝ 0079, ք.Երևան,Մառի փ., 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
ճարտարապետության թեկնածու, դոցենտ

Ս.Ա. Թովմասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства

Научный руководитель: доктор архитектуры, профессор Гаспарян М. А.

Официальные оппоненты: доктор архитектуры, профессор Григорян А.А.

кандидат архитектуры, профессор Алоян А.А.

Ведущая организация: Национальный музей-институт архитектуры имени Ал. Таманяна

Защита состоится 11-го июля 2018г. в 14^{00} часов на заседании специализированного совета 030- “Архитектура и строительство” ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009, г. Ереван, ул.Теряна,105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г.Ереван, ул.Марра, 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 8-го июня 2018г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат архитектуры, доцент

Товмасян С.А.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրության արդիականությունը.

Թանգարաններն անցել են կայացման երկարատև ուղի և կարևոր նշանակություն ունեն մարդկության մշակութային ժառանգության պահպանման, ցուցադրության և հանրահռչակման, կրթական և գիտական զարգացման գործում: Դրանք իրենց գոյությամբ և բովանդակությամբ արտացոլում են տվյալ հասարակարգի զարգացման մակարդակը և վկայում քաղաքակիրթ անցյալի մասին: Թանգարանային շենքերը՝ անտիկ ծագումնաբանություն ունենալով հանդերձ, զարգացել են որպես արևմտաեվրոպական մշակույթի օջախներ, տարածվել տարբեր երկրներում՝ կրելով այդ երկրների ազգային առանձնահատկությունների ազդեցությունները:

Մեր օրերում թանգարանաշինությունը ողջ աշխարհում հսկայական մասշտաբների է հասել և բազմազանությամբ հանդերձ, թանգարանների մեծագույն մասը ներգրավված է շարունակական արդիականացման գործընթացներում:

Թանգարանների հիմնադրման և զարգացման կայուն ընթացքը Հայաստանում սկիզբ դրվեց Խորհրդային ժամանակաշրջանում: Շենքերի գերակշիռ մասը (80%)՝ հարմարեցված, խորհրդային տարիներից պահպանված նյութական ժառանգություն են՝ պատմական շենքեր կամ վարչական տարածքներ (Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի, Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանները, Ա. Իսահակյանի տուն-թանգարանը Երևանում և այլն): Միաժամանակ, առանձնանում են այդ տարիներին նախագծված և կառուցված ազգային ինքնատիպ ոճով կառույցներ (Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան, Հովի. Թումանյանի տուն-թանգարանը, "Էրեբունի" պատմահնագիտական արգելոց-թանգարանը և այլն):

Թանգարանների դերը, ուղղվածությունը, աշխատաոճը և ճարտարապետությունը էապես փոխվեցին անկախությունից հետո, սակայն այդ գործընթացը դեռ չի ավարտվել և անցնում է տարերայնորեն՝ առանց հստակ պատկերացնելու իրավիճակը և ծագած խնդիրները: Փաստորեն, թանգարանաշինության ներկա իրավիճակը կարելի է բնութագրել որպես ճգնաժամային: Խորհրդային Միության ճարտարապետության բաղադրիչը լինելով՝ այն համապատասխանում էր այդ ոլորտում գործող ճարտարապետաշինարարական նորմերին և այսօր, չնայած թանգարանների մասնակի վերակառուցումներին, դրանց մեծամասնության ճարտարապետական լուծումներն ու ոչ լիարժեք նյութատեխնիկական հագեցվածությունը թույլ չեն տալիս թանգարանների գործունեությունն իրականացնել ամբողջական ծավալով:

Խորհրդային տարիներին թանգարանների մեծամասնությունը «երկաթյա վարագույրի» պայմաններում նախատեսված էր հիմնականում ներքին այցելուների համար, սակայն այսօր աշխարհի տարբեր երկրների թանգարաններում շրջած այցելուին չի գոհացնի եղած վիճակը: Փոփոխվել

են նաև ցուցադրության կազմակերպման ձևերն ու մատուցվող թանգարանային ծառայություններին ներկայացվող պահանջները՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ներառելով ICOM–ի ստրատեգիական ծրագրերին համապատասխան կրթադաստիարակչական գործունեություն:

Հայաստանում այսօր հրատապ է ոչ միայն գործող թանգարանների ճարտարապետության ներկա վիճակի ուսումնասիրության ամփոփումը, այլև որպես նախագծային աշխատանքներին նախորդող հետազոտություն, արդիական է դրանց ճարտարապետական կերպարի պատմական և համալիր քննությունը՝ ճարտարապետական ձևագոյացման դասակարգումը, ծավալատարածական հորինվածքի, հատակագծային, գործառնական և տիպաբանական կառուցվածքի, ոճական առանձնահատկությունների ուսումնասիրումն ու գործառնական կառուցվածքի վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումն ու համակարգումը: Անհրաժեշտ է մշակել նաև արդիականացմանն ուղղված առաջարկություններ և գիտականորեն հիմավորել նոր կառուցվելիք թանգարանային համալիրներին ու շինություններին ներկայացվող պահանջները:

Թեմայի ուսումնասիրվածությունը

Հետազոտության համար տեսական հիմք են ծառայել արտերկրի մասնագետների արժեքավոր հրապարակումները, հետազոտությունները, այդ թվում Ա. Չուգունովայի, Մ. Զեյգերի, Մ. Գիեբելհաուսենի, Ս. Մակ Լեոդի աշխատությունները, որոնցում յուրահատուկ մոտեցմամբ են արծարծվել թանգարանային ճարտարապետության ընդհանուր խնդիրները: Թանգարանների նախագծմանն առաջադրվող պահանջների համակարգման համար ուսումնասիրվել են թանգարանային ճարտարապետության միջազգային՝ այդ թվում ռուսական շինարարական նորմատիվներն ու կանոնակարգերը, Վ. Ռեվյակինի աշխատությունը:

Հայ գիտնականներն անդրադարձել են թանգարանային ճարտարապետության հետ կապված առանձին հարցերի լուսաբանմանը: Դրանց թվում է Կ. Ղաֆադարյանի «Հայաստանի թանգարանների պատմությունից» աշխատությունը: Է. Տիգրանյանը ուսումնասիրել է թանգարանների ճարտարապետությունը տիպաբանական տեսակետից՝ հասարակական շենքերի և կառուցվածքների ճարտարապետական նախագծման հիմունքներին նվիրված մենագրությունում:

Որպես ճարտարապետական առանձին ստեղծագործություններ որոշ թանգարանային շենքեր նկարագրված են խորհրդային ճարտարապետությանը և առանձին ճարտարապետներին նվիրված Ա. Գրիգորյանի և Մ. Թովմասյանի, Լ. Բաբայանի և Յու. Յարալովի, Վ. Հարությունյանի, Մ. Հասրաթյանի և Ա. Մելիքյանի աշխատություններում: Այս ցուցակին կարելի է ավելացնել «Հայաստանի և Արցախի թանգարանները» երկլեզու տեղեկագիրքը (2016), Ա. Աճառյանի «Երևանի թանգարանների ինտերիերի դիզայնը» ատենախոսությունը (2017):

Այսպիսով, չնայած թանգարանային շենքերի կառուցման հսկայածավալ փորձին, այսօր լուրջ խնդիր է դրանց նվիրված մասնագիտական ամփոփ, համակարգված ժամանակակից գրականության բացակայությունը: Թանգարանային ճարտարապետությանը նվիրված բոլոր

աշխատությունները հրատարակվել են մինչև 1990-ական թթ., և փաստորեն, 1990-2017 թթ. կառուցված թանգարանների նշանակալի օրինակները մասնագիտական ճարտարապետական գրականությունում տեղ չեն գտել: ՀՀ թանգարանների ճարտարապետական կերպարի պատմական և համալիր հետազոտությունն արդիական է և հրատապ թանգարանային ճարտարապետության աննախադեպ զարգացումների, գոյություն ունեցող պարադիգմայի փոփոխվելու և գրականության մեջ ամբողջական դասակարգման բացակայության պատճառով: Այդ դասակարգման շնորհիվ կարելի է հստակ պատկերացնել ՀՀ թանգարանային ճարտարապետության արդի վիճակը, համեմատել այն համաշխարհային միտումների հետ և ուրվագծել ժամանակին համահունչ զարգացման ուղիները:

Հետազոտվող թեմայի արդիականությունն այսպիսով պայմանավորված է երկու հիմնական խնդիրներ կարգավորելու անհրաժեշտությամբ:

- XX և XXI դարերի ճարտարապետության պատմության շրջանակների ընդլայնում (բաց էջերի լրացում)
- մի շարք գործնական, հրատապ խնդիրների լուծում՝ կապված գոյություն ունեցող թանգարանային շենքերը վերակառուցելու և արդիականացնելու, ինչպես նաև տեղական պայմաններում ժամանակակից, առաջադիմական չափանիշներ պարունակող նոր թանգարանային շենքերի կառուցման համար:

Ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել ՀՀ թանգարանային շենքերի ճարտարապետական կազմակերպման առանձնահատկությունները, տալ դրանց զարգացման և արդիականացման առաջարկություններ՝ հաշվի առնելով համաշխարհային թանգարանաշինության ժամանակակից սկզբունքները և դրանց օգտագործման հնարավորությունները:

Ուսումնասիրության խնդիրներն են.

- նկարագրել հայրենական և արտերկրյա թանգարանների պատմաճարտարապետական զարգացման հիմնական առանձնա - հատկությունները,
- վերլուծել ժամանակակից թանգարանային շենքերի ճարտարապետական ձևաստեղծման ուղղությունները,
- համակարգել արդի նախագծային լուծումների օրինաչափությունները, պահանջները և բացահայտել թանգարանային շենքերի վերակառուցման, արդիականացման համար անհրաժեշտ հիմնախնդիրները, նախադրյալները, հնարավորությունները,
- սահմանել նախագծային սկզբունքային առաջարկներ, հանձնարարականներ և գործառնական գոտևորման համանշանակ մոդելի հայեցակարգ:

Ուսումնասիրության օբյեկտը՝ թանգարանային շենքերի ճարտարապետությունը:

Ուսումնասիրության առարկան՝ ՀՀ թանգարանային շենքերի գործառնական կազմակերպման, ճարտարապետական ձևաստեղծման և զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է արխիվային և հրատարակված փաստաթղթերի, գրական աղբյուրների,

լուսանկարչական նյութերի, նախագծային փաթեթների և գծագրերի ճարտարապետական վերլուծության վրա: Առանձին օբյեկտների կարգավիճակի և շահագործման խնդիրների վերաբերյալ կիրառվել է թանգարանագիտության ոլորտի մասնագետների հարցման մեթոդը:

Ուսումնասիրվող շենքերի ներկայիս վիճակի փաստագրումն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թանգարանների, «Հայնախագիծ ԲԲԸ»-ի մի շարք ճարտարապետական արվեստանոցների կողմից տրամադրած նյութերի հիման վրա:

Գիտական նորույթը.

Ատենախոսությունը Հայաստանի թանգարանային շենքերի ճարտարապետահատակագծային խնդիրների և դրանց լուծման առաջին համապարփակ ուսումնասիրությունն է: Աշխատանքում ի մի է բերվել թանգարանային շենքերի ճարտարապետական ժառանգությունը և ստեղծվել է տեղեկատվական-վերլուծական տվյալների շտեմարան. Նկարագրվել են թանգարանների բնույթը, տիպը, պատմական տվյալները, ճարտարապետահատակագծային առանձնահատկությունները, արդի վիճակը և այլ:

Մշակվել են զարգացման, արդիականացման ու ժամանակակից պահանջների միջազգային չափորոշիչներին և ազգային առանձնահատկություններին համապատասխան առաջարկություններ:

Կազմվել է թանգարանի ճարտարապետական կազմակերպման և կառավարման կառուցվածքային մոդել՝ հաշվի առնելով դիզայնի, նորագույն տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից պահանջները և քաղաքաշինական նորմերը:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում արխիվային փաստաթղթեր, նախագծային նյութեր՝ համապատասխան ուսումնասիրություններով:

Պաշտպանության են ներկայացվում.

- հայրենական և արտերկրյա թանգարանների պատմաճարտարապետական զարգացման հիմնական առանձնահատկությունները,
- արդի թանգարանաշինության և թանգարանների արդիականացման համաշխարհային փորձը,
- ՀՀ թանգարանների ներկա վիճակը, դրանց գործառական կազմակերպմանն առաջադրվող հիմնական պահանջները, արդիականացման հնարավոր հայեցակարգային առաջարկներ:

Աշխատանքի գործնական նշանակությունը.

Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել թանգարանային շենքերի ճարտարապետական, հատակագծային նոր հայեցակարգի մշակման, նախագծային առաջարկների ձևավորման, վերակառուցման և արդիականացման ճարտարապետանախագծային առաջադրանքների կազմավորման և նորմատիվ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքների հիմնավորման համար:

Ուսումնասիրության տեսական նյութերը կարող են օգտագործվել համաշխարհային և հայ արդի ճարտարապետության պատմության դասընթացներում, ինչպես նաև մշակութային ժառանգության

վերականգնման նախագծերին նախորդող հետազոտական ուսումնասիրություններում:

Աշխատանքի հավաստիությունը.

Ատենախոսության հիմնական դրույթները տպագրվել են 8 գիտական հոդվածներում, տարբեր ժողովածուներում:

Ատենախոսության առանձին դրույթներ ներկայացվել են «Ճարտարապետություն և շինարարություն» 7-րդ միջազգային գիտաժողովում (Ֆլորենցիա, 2015), ինչպես նաև Հայաստանի կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների ուշադրությանը՝ ՀՀ Մշակույթի նախարարության, «ԻԿՕՄ-ի Հայկական թանգարանների ազգային կենտրոն» ՀԿ, Թանգարանային կրթության կենտրոն:

Ատենախոսությունը քննարկվել է ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգ-նման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի 2018թ. մայիսի 17-ի նիստում (արձանագրություն թիվ 9):

Աշխատանքի կառուցվածքը.

Ուսումնասիրության տեքստը բաղկացած է 150 էջերում շարադրված ներածությունից, երեք գլխից՝ իրենց եզրակացություններով և ընդհանուր եզրակացություններից, 90 անուն մատենագիտությունից, պատկերա-զարդման ցուցակից: Հավելվածը՝ 116 էջ, ներառում է աղյուսակներ, լուսանկարներ, գծապատկերներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թանգարանը հավաքագրում, պահպանում, ցուցադրում է պատմական, հոգևոր, մշակութային հուշարձանները, զբաղվում լուսավորչական և հանրահռչակման գործունեությամբ և լուծում է մի շարք այլ կարևոր խնդիրներ, ինպիսիք են՝ գիտահետազոտական աշխատանքները, պահպանվող թանգարանային առարկաների թվագրումը, նկարագրումը, բնօրինակության հաստատումը, թանգարանային նոր արժեքների ձեռքբերումը, վերականգնողական աշխատանքը, տպագիր նյութերի հրատարակումը:

Թանգարանների նախատիպերն առաջացան մարդկային հասարակության զարգացման այն փուլում, երբ բնությունից և հասարակական կյանքից վերցված բնօրինակ առարկաները սկսեցին պահպանվել ոչ թե կենցաղային, կիրառական նպատակներով կամ որպես նյութական արժեքներ, այլ որպես փաստագրական, մեմորիալ-հուշային վկայություններ և գեղագիտական արժեքներ: Դիտարկելով թանգարանների պատմական ձևավորման ու զարգացման ուղին, պարզ է դառնում, որ թանգարանների նախատիպերում առկա էին այն հիմնական, գլխավոր գործոն գոտիները, որոնք կարևորվում և արժևորվում են այսօր:

Առանձնացվել են թանգարանային շենքերի ճարտարապետահատակագծային ձևաստեղծման և զարգացման 6 փուլ. (Անտիկ շրջանից - XIV–XV դարերի սահմանագիծ՝ նախաթանգարանային հավաքչական գործունեության փուլ.; XIV–XVդդ. - XVIIIդ. վերջ՝ թանգարանի կազմավորումը որպես սոցմշակութային ֆենոմեն, էլիտար՝«փակ» տիպի թանգարանների առաջացում և հավաքչական գործունեության՝ որպես մշակույթի յուրահատուկ ճյուղի ձևավորման փուլ; XVIIIդ.վերջ-XIXդ. առաջին կես՝ թանգարանային գործի՝ որպես ինքնուրույն մշակութային ոլորտի կազմավորում, նոր ուղղվածության թանգարանների առաջացում, թանգարանի աստիճանական վերափոխումը իբրև հասարակական-մշակութային կենտրոնի; XX դար՝ նոր տիպի և ուղղվածության թանգարանների առաջացում, շառավղային և սեգմենտաձև սխեմաներով թանգարանների ճարտարապետական կազմավորման օրինակներ, տեխնիկայի ներգրավումը թանգարանային գործունեության ոլորտ, մշակութային արժեքների պահպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների դերի և այս ոլորտում միջազգային իրավունքի ձևավորման փուլ; XX դարի երկրորդ կես՝ թանգարանային «պայթունի» շրջան, ձևավորվեցին նոր ճարտարապետահատակագծային առանձնահատկություններ՝ կառույցի համալրվածությունը, դինամիկությունը, ճկունությունը:

Որպես թանգարանների ճարտարապետական ձևավորման արդի՝ վեցերորդ փուլ կարելի է համարել վերջին տարիներին կառուցված թանգարանների նախագծման առանձնացված երեք ուղղությունները՝ «Թանգարան առանց պատերի», «Պատեր առանց թանգարանի», «Հոգևոր կենտրոններ-քաղաքային դոմինանտներ»:

Վերլուծության արդյունքում համակարգվել են նաև ժամանակակից թանգարանների նախագծմանն առաջադրվող հիմնական պարտադիր պահանջները: Վերլուծվել են թանգարանների տեղակայման քաղաքաշինական սկզբունքները, հողատարածքին ներկայացվող պահանջները, թանգարանի հողատարածքի գործառնական գոտիները, թանգարանային շենքերի հեռանկարային զարգացման, դինամիկայի, փոխակերպման, ընդլայնման հնարավորությունները: Ուսումնասիրվել են աշխարհում տարածված թանգարանային շենքերի նախագծման և ճարտարապետական լուծումների տարբերակներ (ազատ հատակագծմամբ մեծ բաց տարածքներ; մեծ դահլիճներ՝ նախատեսված որոշակի շարժական հուշարձանների տեղակայման համար; ցուցադրության պահանջներին համապատասխան բաժանված տարածություն և փոքրիկ դահլիճներ՝ ոչ մեծ ցուցանմուշների համար), թանգարանային շենքերի հորինվածքային տեսակները (միահարկ, բազմահարկ)՝ դրանց առավելություններով և թերություններով: Համակարգվել են թանգարանային շենքերի գործառնական մակերեսների մոտավոր հարաբերակցությունները թանգարանի բնույթից ու նշանակությունից կախված ստորաբաժանումներով: Նախորոշվել է թանգարանների նախագծման քառափուլ գործընթացը և ինժեներա-տեխնիկական սարքավորումներին ներկայացվող պահանջները (կենտրոնական ջեռուցում, տաք և սառը ջրամատակարարում, օդորակում, օպտիմալ ջերմախոնավային ռեժիմ ապահովող համակարգ,

լուսավորություն, կոյուղի, պահպանության և հակահրդեհային ազդանշանային համակարգ, շանթարգել և այլն): Այս գլխում դիտարկվել են նաև թանգարանային շենքերի արդիականացման հեռանկարներն ըստ համաշխարհային փորձի: Արձանագրվել է, որ ներկայումս մշակութային ժառանգության հուշարձանների պահպանմանն ուղղվում են բազմաթիվ միջոցառումներ (ամրակայում, թանգարանի հիմնադրում, վերականգնում, այլ): Հաճախ դրանք կարող են նաև համատեղվել կամ համադրվել թանգարանային շինությունների վերակառուցման, մասնակի ճարտարապետական վերակազմավորման հետ, որը ներառում է վերահատակագծում, սրահների բարձրությունների ավելացում, կոնստրուկցիաների ամրացում, մասնակի վերափոփոխություն կամ փոփոխություն, նաև կցակառույցների, հարկերի ավելացում և շենքի ճակատների փոփոխություն:

Ինչպես ցույց են տալիս համաշխարհային արդի թանգարանաշինության և թանգարանային գործի ուսումնասիրության արդյունքերը, այսօր նշանակալի պահանջարկ ունի թանգարանների համանշանակ գրավչությունը և ժամանակակից թանգարաններն ի պատասխան հանրության կողմից ներկայացվող պահանջների և «Փոփոխվող թանգարան փոփոխվող միջավայրում» կարգախոսի, պահպանելով ավանդական գործառույթները, զարգանում են, փոխակերպում և ընդարձակում իրենց գործառնական կառուցվածքը՝ այցելուներին ապահովելով բազմատեսակ գործունեությամբ և ծառայություններով:

Թանգարանային կառույցներին առաջադրվող մյուս այժմեական ճարտարապետական պահանջներից են.

1. Սրահների ճկուն փոխակերպման հնարավորությունը կրող պատերի նվազագույն քանակությամբ, ինչն ապահովում է թանգարանի տարբեր գործառնական գոտիների փոխադարձ ներթափանցման, սերտաճման, նորերի կազմավորման հնարավորությունը :
2. Թանգարանի արտաքին և միջավայրային գրավիչ ձևավորումը.

Ժամանակակից թանգարանային շենքերն առանձնանում են ոճական և ծավալատարածական համարձակ ու արտասովոր լուծումներով, մակատեսքերի հակադրությամբ և այլն: Ավանդական չորս ճակատային համակարգը զիջում է իր տեղը էլեկտրոնային և բարձր տեխնոլոգիաների դարաշրջանի քանդակաերկրաչափական նորահայտ ծավալներին: Այս ամենի համադրման արդյունքում էական է թանգարանի կերպարի՝ որպես բազմագործառական կենտրոնի ստեղծումն՝ անքակտելիորեն կապված շենքի ներքին միջավայրի և գործառնական կառուցվածքի հետ.

3. Տեխնոլոգիական հնարավորությունները և դիզայնը.

Թանգարանային շենքերի ժամանակակից դիզայնը, թանգարաններում էլեկտրոնային ԶԼՄ-ների, նորագույն տեխնոլոգիաների ու համացանցի հետ համադրությամբ, դառնում է շինության գոյատևման, հասարակության աչքում թանգարանի վարկանիշի՝ հեղինակության բարձրացման և թանգարանների գեղագիտական ինքնարտահայտման համար վճռորոշ և կարևորագույն նախապայման:

4. Թանգարանների արդիականացմանն ուղղված լուծումների մշակման համար հատկանշական է թանգարանի տեղադրությունը, հասարակական տրանսպորտի և ավտոկայանատեղիների հասանելիությունը, հետիոտն,

երթևեկելի փողոցների և կանաչապատ տարածքների կապը, թանգարանի տարածքում միջոցառումներ անցկացնելու հաճախականության տվյալների համակարգումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Նկարագրված է Հայաստանի թանգարանային ցանցը՝ անտիկ, միջնադարյան, ռուսական կայսրության, խորհրդային և Երրորդ հանրապետության տարիների պատմամշակութային ժառանգության օբյեկտները: Թանգարանների նախատիպ են հանդիսացել ուրարտական տաճարները (ըստ Կ. Ղաֆադարյանի), միջնադարյան թանգարանները դասակարգվում են 3 տիպի՝ արքունի, իշխանական և եկեղեցական (ըստ Հովի. Դրասխանակերտցու): Ռուսական տիրապետության օրոք եկեղեցիներին կից հայկական թանգարան հիմնելու մասին գրավոր տեղեկություններ պահպանվել են XIX դ. կեսերից, իսկ Անդրկովկասում առաջին աշխարհիկ թանգարան է համարվում Խ. Աբովյանի 1846 թ. «Հայկական հնությունների կաբինետը»՝ ստեղծված Երևանի գավառային դպրոցի գրադարանին կից, իսկ առաջին թանգարանային շենքը՝ Գեորգ IV կաթողիկոսի կառուցած, երեք սրահներից բաղկացած էջմիածնի Գևորգյան թանգարանը, որը 1955թ. էջմիածնի տաճարի վերանորոգումից հետո դարձավ նոր ցուցադրությամբ թանգարան:

Խորհրդային կարգերի հաստատմամբ նշանավորվում է թանգարանային գործի իրական վերելքը՝ պայմանավորված ոլորտի կազմակերպման նոր սկզբունքներով, հատուկ թանգարանային շենքերի նախագծային հիմքերի ընդունմամբ ու կառուցմամբ, հուշային թանգարանների ձևավորմամբ, որոշ կառույցների՝ թանգարանների հարմարեցմամբ և այլն: Այդ տարիներին նախագծվել և կառուցվել են Հ. Թումանյանի թանգարանը (Գ. Աղաբաբյան, 1949-1953), Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը (Մ. Գրիգորյան, Է. Ալթունյան, 1984), Երևանի հիմնադրման «Էրեբունի»(ճարտ.՝ Շ.Ազատյան, Բ.Արզումանյան, քանդ. Ա.Հարությունյան, 1968), «Մեծամոր»(ճարտ.՝ Մ. Մանվելյան,1968), պատմահնագիտական արգելոց թանգարանները, Հայաստանի ազգագրության, ազգային-ազատագրական պայքարի թանգարանը Սարդարապատում (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան,1968) և այլն: Անկախության 25 տարիների ընթացքում չնայած թանգարանաշինության համար ոչ բերենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններին, կառուցվեցին և հիմնադրվեցին Հայոց ցեղասպանության թանգարանը (ճարտ.՝ Ս. Քալաշյան, 1995), Գաֆեսճեան արվեստի կենտրոն-թանգարանը (ճարտ.՝ Դ. Հոթսը, 2009), Ֆ. Նանսենի թանգարանը (ճարտ.՝ Ա. Սոխիկյան, 2014), Կոմիտասի թանգարան-ինստիտուտը (ճարտ.՝ Ա. Մեսչյան, 2015) և այլ թանգարաններ: Այսօր Հայաստանում գործում է 125 թանգարան: Կազմվել է թանգարանների ստեղծման ժամանակագրությունը և դրանց տեղակայումը Հայաստանի մարզերում և Երևանում՝ թվային և տոկոսային հարաբերակցությամբ (նկ.1): ՀՀ թանգարանները դասակարգված են նաև ըստ սեփականության ձևի (պետական, համայնքային, մասնավոր):

Թանգարանները նկարագրվել են ըստ բնույթի՝ (պատմության, արվեստի, գիտության և տեխնիկայի, արդյունաբերական, բնագիտական) և տիպի

(թանգարան, արգելոց-թանգարան, հուշային, բուհական, կոմպլեքս): Ստեղծվել է տվյալների շտեմարան համապատասխան ռեկվիզիտներով, որոնց հիման վրա հետագայում հնարավոր է իրականացնել համակարգչային ծրագրավորում: Իրականացվել է թանգարանների ճարտարապետական արդի վիճակի ուսումնասիրությունը: Բնորոշվել են յուրաքանչյուր թանգարանի ճարտարապետական կամ տեխնոլոգիական խնդիրները՝ (ցուցադրական, ֆոնդապահոցների անբավարար տարածք, ջերմախոնավային, անվտանգության, հակահրդեհային, լուսավորության արդիական համակարգերի բացակայություն) և նախորոշվել են թանգարանների արդիականացմանն ուղղված անհրաժեշտ ճարտարապետական կամ այլ բնույթի գործառույթները (ընթացիկ արդիականացման, հիմնարար, ժամանակակից տեխ. լուծումներով վերակառուցման, նոր շենքի կառուցման անհրաժեշտություն):

Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալներով ձևավորվել է ՀՀ 125 թանգարանները բնութագրող համապատասխան սխեմա ըստ դրանց տիպի, բնույթի, ճարտարապետական կազմավորման առանձնահատկությունների (նկ.2):



Նկ.1. Հայաստանում թանգարանների ստեղծման ժամանակագրությունը



ՆԿ.1. ՀՀ 125 թանգարանների դասակարգումն ըստ տիպի, բնույթի, ճարտարապետական կազմավորման առանձնահատկությունների

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Արդի թանգարանագիտական և մշակութաբանական հայեցակարգերի փոփոխությունները, այցելուի ցուցահանդեսներին և ցուցադրանքին ինտերակտիվ մասնակցության կարևորությունը համապատասխանաբար իրենց արտացոլումը պետք է գտնեն հայաստանյան թանգարանային ճարտարապետության նորարարական մոտեցումներում «ոչ պրոֆիլային» տարածքների ձևավորմամբ՝ գոյություն ունեցող թանգարանների համար առկա տարածքների վերակառուցմամբ, նոր հիմնադրվողների համար՝ հատուկ նախագծումներով:

Հայաստանի թանգարանների արդիականացմանը, նորերի տարածական կազմակերպմանը կամ նախագծմանն ուղղված ճարտարապետական առաջանդրանքները կազմելուց առաջ նպատակահարմար է իրականցնել որոշակի հետազոտություններ, որոնք հաշվի են առնում.

- Թանգարանների ցուցադրման նպատակաուղղվածությունը, որը կարող է լինել ցուցադրողակենտրոն, նմուշակենտրոն,այցելուակենտրոն
- Թանգարանային գործառույթի սուբյեկտների այցելու–հավաքածու-միջավայր փոխազդեցությունը
- Ցուցադրվող նմուշի ներկայացման խորությունը՝ թռուցիկ, ճանաչողական, ակադեմիկ, ձևը՝ ցուցանակային, վերբալ, վիդեո, դասախոսություն
- Թանգարանի տնտեսվարությունը՝ տոմսերի եկամուտները, միջոցառումների անցկացումը, սրճարանների գոյությունը, հուշանվերային գործունեությունը:

Հայաստանում նոր կառուցվող կամ հիմնադրվող թանգարանների համար ընդհանուր ճարտարապետական կազմակերպման պահանջ կարող է դառնալ մեծ մակերեսներով սրահների առկայությունը, ինչպես նաև արդիական է թանգարանային հավելյալ գործառույթներին համապատասխան թանգարանների հանրային տարածքները համակարգել ըստ ներքոնշյալ գոտիների. **Կրթական**՝ լսարաններ, խմբակային պարապմունքների սենյակներ, հանդիպումների, ընդունելությունների, շնորհանդեսների անցկացման տարածքներ և այլն; **Գիտական՝** կաբինետներ, հրատարակչական բլոկ; **Մշակութային՝** ցուցադրական տարածքներ, կինոդահլիճներ; **Հանգստի՝** կանաչ գոտիներ, ձմեռային այգիներ, հյուրասենյակներ, սրճարաններ; **Տեղեկատվական՝** գովազդային և հուշանվերային բլոկ:

Հայաստանի 125 թանգարանների ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ թանգարանների հեռանկարային զարգացումը կարող է իրականացվել ներքին վերահատակագծմամբ, շենքի մեծացմամբ կամ ընդարձակմամբ՝ ճարտարապետական նախագծման փուլում հաշվի առնելով Հայաստանի գերակտիվ սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը և երկրաշարժերի պարբերականության վիճակագրությունը:

Արձանագրվել են ՀՀ թանգարանային շենքերի արդիականացման հիմնախնդիրները և հնարավորությունները:

Սահմանվել են հետևյալ հիմնախնդիրները.

- Թանգարանները, քաղաքաշինական տեսակետից ժառանգելով շահեկան դիրքեր ՀՀ քաղաքների գլխավոր հատակագծերի համատեքստում և գտնվելով վերջիններիս ակտիվ գոտիներում, չեն մասնակցում քաղաքային միջավայրի նորովի զարգացմանը:
- Թանգարանային շենքերում առայժմ բացակայում են արդիական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների /անհատական համակարգիչներ, հզոր սերվերային միավորումներ, փաստաթղթերի, թանգարանային առարկաների վերականգնման, թվայնացման սարքեր, միկրոֆիլմերի ստեղծման պայմաններ/ տեղակայման համար անհրաժեշտ տարածքներ:
- Հայաստանի Հանրապետության 125 թանգարանները կարիք ունեն.
  Հիմնարար վերանորոգման - 8
  Նոր շենքերի կառուցման - 5
  Վերակառուցման, արդիական համակարգերի տեղադրման, նոր ճարտարապետական լուծումների - 22
  Ընթացիկ կամ մասնակի արդիականացման - 90

Հիմնախնդիրներն առավել մասնագիտորեն վերլուծելու համար անհրաժեշտ է.

- ✓ Թանգարանային շենքերի ինժեներա-տեխնիկական վիճակի լրացուցիչ հետազոտություններ, այդ թվում արդիականացնել և տեղայնացնել սեյսմազինվածության աստիճանը:
- ✓ Մշակել միջազգային նորմերին համապատասխան տեղայնացված չափորոշիչներ

Բնորոշվել են արդիականացման ներքոհիշյալ հնարավորությունները.

- ✓ Մասնագիտական միջոցառումների առանձին կամ համալիր կիրառում, ինչպիսիք են՝ վերանորոգումը, վերակառուցումը, ընդարձակումը, հարմարեցումը:
- ✓ Արտադրական շենք-շինությունների վերակառուցման միջոցով նոր թանգարանային տարածքների ստեղծումը:

ՀՀ թանգարանային շենքերի արդիականացման ընթացիկ իրադրությունը, արդիականացման հայեցակարգային առաջարկներ.

2001-2002թթ. «Լինսի» հիմնադրամի գործունեության շնորհիվ Հայաստանում նոր նյութերի օգտագործմամբ, լուսավորության, սան-հիգիենիկ համակարգերի տեղադրմամբ վերանորոգվել է շուրջ 12 թանգարան: Անկախության 25 տարիների ընթացքում կառուցվել է 7 նոր թանգարանային շենք (Ցեղասպանության, Կոմիտասի, Ֆ. Նանսենի, Զորավար Անդրանիկի, Մ. Գալշոյանի թանգարանները, Մատենադարանի նոր մասնաշենքը), հիմնադրվել է Գաֆեսճեան արվեստի կենտրոնը, որը չնայած տեղակայված է այլ նշանակության կառույցի կազմում, ի սկզբանե՝ Ջ. Թորոսյանի նախագծով նախատեսված էր որպես ավեստի կենտրոն: Հետագայում, հաշվի առնելով ժամանակակից թանգարանների նախագծմանը ներկայացվող մակերեսների հարաբերակցության, ֆունկցիոնալ գոտևորման չափորոշիները, հատուկ նախագծմամբ հարմարեցվեց, և այժմ իրականացվող գործառույթների մակարդակով

լիովին համապատասանում է միջազգային թանգարանային կենտրոն լինելուն:

Արդի միտումներով վերանորոգվել և արդիականացվել են.

Պ. Պռոշյանի (2008թ.),Ա.Խաչատրյանի (2006-2008թթ.), Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի(2011- 2012թթ.), Ա. Բակունցի (2013թ.), Միջին Արևելքի(2015թ.), Դսեղի Հ. Թումանյանի (2016թ.) տուն-թանգարանները: 2009 թ. բացվեց Մատենադարանի նոր մասնաշենքը: 2016թ. կապիտալ վերանորոգումից հետո վերաբացվեց Մ. Սարյանի թանգարանը՝ ավելացված մեկ հարկով, դահլիճով, կրթական պարապմունքների սրահով, սրճարանով և այլ գործառնական լուծումներով: Արդիականացվել են նաև ինժեներատեխնիկական՝ ազդանշանային, հակահրդեհային, ջերմախոնավային և լուսավորության համակարգերը:

2018թ. դրությամբ վերանորոգվել են.

Դ. Դեմիրճյանի. Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության, Ջոտտոյի, Արա Սարգսյանի և Հ. Կոջոյանի, Միկոյան եղբայրների թանգարանները:

Արդիականացման հայեցակարգային նախագծեր են մշակված «Էրեբունի», «Մեծամոր», «Կարմիր բլուր» պատմահնագիտական արգելոց-թանգարանների համար: Սրանց իրականացման արդյունքում վերոնշյալ թանգարանների տարածքը կբարեկարգվի, թանգարանները կունենան նոր թանգարանային շենք, ֆունկցիոնալ համապատասխան գոտևորում, հուշանվերների վաճառակետ, ինչպես նաև հնագույն ժամանակների հայկական բնակելի տները, գործառույթները, ծեսերը, խոհանոցը ներկայացնող և թանգարանի ուղղվածությանը համահունչ հատուկ տարածքներ՝ որոնք մշակութային զբոսաշրջությունը զարգացնող յուրատեսակ խթան կհանդիսանան:

2016թ. անցկացվեց մրցույթ՝ Հայաստանի Ազգային պատկերասրահի նոր շենքի կառուցման առաջադրանքով: Ներկայացվել էր 6 հայեցակարգային նախագիծ՝ «Ս.Սարդարյան ճարտարապետական արվեստանոցը», «Լևոն Քրիստափորյանի ճարտարապետական արվեստանոցը», «Միհր Չերքեզյան ճարտարապետական արվեստանոցը» («Հայնախագիծ ԲԲԸ»), «ԱՐԽկոոպ», «Քելքըշոզ» ճարտարապետական արվեստանոցները, ճարտարապետ Կարեն Հարությունյանը:

Երևանում այժմ կառուցվում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանը (ճարտ.՝ Տ. Բարսեղյան): Այստեղ հաշվի են առնված Գլուխ 1-ում արծարծված բոլոր նկատառումները և այն կարող է նախատիպ հանդիսանալ Հայաստանում ժամանակակից արվեստի մշակութային կենտրոն-թանգարանների ձևավորման համար:

Որպես հայկական թանգարանաշինության նորագույն առաջարկ կարելի է համարել Լոս Անջելեսում (ԱՄՆ) կառուցվելիք Հայկական ամերիկյան թանգարանը (Alajajian Marcoosi Architects ճարտ. բյուրո)

Թանգարանային շենքերի արդիականացմամբ, նոր շենքերի նախագծման գործընթացում գործառական հարմարավետության ստեղծման համար նաև անհրաժեշտ է.

- Նորագույն թվային տեխնոլոգիաների ներդրման արդյունքում մեծացնել թանգարանային շենքի ցուցադրական և հասարակական գոտիների շահագործման հնարավորությունները:

• Տեղեկատվության ստացման արագացում՝ թվայնացման, էլեկտրոնային կատալոգների ստեղծման, ձայնատեսողական միջոցների կիրառման հաշվին:

• Պարզ և արագ կողմնորոշում՝ տեղեկատվական նշանների համակարգեր, ուղեցույցեր, ձայնային ազդանշաններ/

• Լուսավորության մասնագիտական լուծումների ապահովում բնական և արհեստական լուսավորության համադրմամբ և թանգարանային չափանիշներին համապատասխանող լուսավորող սարքավորումների կիրառմամբ

• Տնտեսական և ակուստիկ պահանջները բավարարելու համար տեղադրել արդիական ինժեներատեխնիկական սարքավորումներ և համակարգեր, ֆիզիոլոգիական և տեխնոլոգիական պայմանների ապահովմամբ ստեղծել անհրաժեշտ միկրոկլիմա:

• Լուսագունային հարաբերությունների ներդաշնակությամբ, ճարտարապետական ոճերի սինթեզով ապահովել ներքին միջավայրի ոճային միասնությունը:

• Ցուցադրական և սպասարկման տարածքների համարարավետ նախագծում՝ տարբերակված գոտևորմամբ:

• Հաշվի առնել շենքի գործառական կառուցվածքի հնարավորությունները և ազատ նախագծման սկզբունքներով կառույցի բարոյական ծերացումը:

Հիմք ընդունելով Գլուխ 1-ում թանգարանների նախագծմանն առաջադրվող պահանջները, նաև միջազգային այլ չափորոշիչներ, առաջադրվում է թանգարանի նախագծման (արդիականացման) համանշանակ մոդել, ժամանակակից թանգարանային գործառույթների համար անհրաժեշտ գործառնական գոտևորմամբ (նկ. 3-4):



Մուտքի (1-9); **ցուցադրական,** (10-13; 32); **Ֆոնդային հավաքածուի** (17-20); **Գիտական աշխատանքների** (14-16; 21-23); **Վարչական** (24-31), **Տնտեսական** (35-39); **Հանգստի**(33,34) **գոտիներ**

Նկ. 3 . Թանգարանի նախագծման / արդիականացման / մոդել



Նկ. 4. Ժամանակակից թանգարանային գործառույթների համար հիմնական գործառնական գոտիները տոկոսային հարաբերակցությամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցույց է տրվել, որ թանգարանները կայացման պատմական ուղու ընթացքում դրսևորվել են որպես մեկ միասնական համակարգ, որպես անցյալի քաղաքակրթությունները, մշակութային ժառանգությունը բովանդակող և ներկայացնող, համընդհանուր խնդիրներ ու նպատակներ ունեցող հաստատություններ, որոնց նախատիպերում էլ առկա էին այն հիմնական, գլխավոր գործառական գոտիները, որոնք կարևորվում և արժևորվում են այսօր: Հայաստանի թանգարանների կազմավորման պատմությունը սկսվում է մ.թ.ա. VIII դարից, սակայն թանգարաններն որպես տիպաբանական օբյեկտ ձևավորվեցին Խորհրդային ժամանակաշրջանում (հարմարեցված տարածքներ, վարչական շենքեր և առանձին, հատուկ նախագծված կառույցներ): Արդի ճարտարապետության մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ. խորհրդային կարծրատիպերը փոխարինվում են ազատ ու ինքնատիպ նոր ոճաբանական լուծումներով, ձգտելով թանգարանային ճարտարապետությունը հնարավորինս համապատասխանեցնել միջազգային օրինակելի թանգարանի գաղափարին, միաժամանակ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները:

«Փոփոխվող թանգարան փոփոխվող միջավայրում» կարգախոսին համապատասխան այսօր ձևավորվում է թանգարանային ճարտարապետության և ցուցադրվող հավաքածուի անբաժան և ներդաշնակ միասնության տեսլականը, որի բաղադրիչ մասերն են՝ թանգարանային ճարտարապետության բացարձակ ինքնատիպությունը, ցուցահանդեսներին և ցուցադրանքին այցելուի ինտերակտիվ մասնակցության կարևորումը՝ ժամանակակից նորարարական տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործմամբ:

2. Բացահայտվել է, որ արդի թանգարանային քաղաքականության մեջ թանգարանագիտական և մշակութաբանական հայեցակարգերի փոփոխություններին համապատասխան թանգարանային կառույցներին առաջադրվող այժմեական ճարտարապետական պահանջներից են.

- թանգարանի ներքին միջավայրի ներկայացումն իբրև «կենդանի» տեղեկատվական տարածություն՝ սրահների ճկուն փոխակերպման հնարավորությամբ,
- թանգարանի՝ որպես բազմագործառական կենտրոնի կերպարի ստեղծումը արտաքին և միջավայրային գրավիչ ձևավորմամբ՝ արդի ճարտարապետական հորինվածքների, շինարարական թեթև ու դյուրաշարժ կոնստրուկցիաների կիրառմամբ:

3. Արձանագրվել է թանգարանների տարածքի գործառնական, ճարտարապետական կազմակերպման, ոճական ու կոնստրուկտիվ լուծումների, էքստերյերի և ինտերյերի ձևաստեղծման խիստ տարբեր մակարդակներ և որակ: Հետազոտված թանգարանները խմբավորվել և դասակարգվել են ըստ.

ա. ժամանակագրության
բ. աշխարհագրական տեղաբաշխման՝ ՀՀ մարզերում և Երևանում;
գ. սեփականության ձևի՝ պետական, համայնքային, մասնավոր
դ. բնույթի՝ պատմության, արվեստի, գիտության և տեխնիկայի,

արդյունաբերական, բնագիտական, գյուղատնտեսական;

ե. տիպի՝ թանգարան, արգելոց-թանգարան, հուշային, բուհական, կոմպլեքս;

զ. արդի վիճակի;

է. թանգարանային շենքերի ճարտարապետական կազմակերպման առանձնահատկությունների՝

- առանձին կառույցում հատուկ նախագծմամբ իրականացված,
- այլ նշանակության կառույցում տեղակայված,
- հարմարեցված;

ը. հատակագծային լուծումների՝

- սրահների՝ հորիզոնական ուղղությամբ, հաջորդական,
- ուղղաձիգ կամ բևեռացված դասավորությամբ;

թ. առկա խնդիրների՝

- նոր շենքերի կառուցման անհրաժեշտություն,
- ոչ բավարար տարածքներ,
- հակահրդեհային, տեսահսկողական ազդանշանային արդիական համակարգերի բացակայություն

ժ. արդիականացման հնարավորությունների՝

- վերանորոգման,
- վերակառուցման,
- ընդարձակման,
- հարմարեցման միջոցով:

4. Մշակվել են հետևյալ առաջարկները.

○ Հայաստանում հրատապ է միջազգային նորմերին համապատասխան թանգարանների նախագծմանն առնչվող տեղայնացված չափորոշիչների սահմանումը:

○ Նորագույն ճարտարապետահատակագծային հայեցակարգերի, նորագույն տեխնոլոգիաների և դիզայներական մոտեցումների համադրությամբ գործառնական, միաժամանակ գեղագիտական միջավայրի ստեղծում, ինչը շինության գոյատևման վճռորոշ և կարևորագույն նախապայման կհանդիսանա, հնարավորինս երկարաձգելով կառույցի բարոյական ծերացումը:

○ Թանգարանային տարածքների գործառնական գոտևորման համանշանակ մոդելի ներկայացում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հետևյալ գիտական աշխատանքներում

1. Քոչար Կ. Հ. Երվանդ Քոչարի թանգարան. Արդի խնդիրներն ու զարգացման հեռանկարները//ԵրՃՇՊՀ Գիտ.աշխ. ժողովածու.- Երևան, 2012.-Հ III/46/.-էջ 46-52:

2. ՔոչարԿ.Հ. Ակնարկ թանգարանների կազմավորման ու զարգացման մասին//ԵրՃՇՊՀԳիտ.աշխ. ժողովածու.-Երևան, 2013,-ՀII /49/,-էջ82-90:
3. Քոչար Կ. Հ. Թանգարանների կազմավորումն ու տարատեսակները XX դարում //ՃՇՀԱՀգիտական աշխատություններ.- Երևան, 2014. -Հ. IV (55).- էջ 86 - 98:

4. Kochar. K.H, Safaryan A.Yu. Spatial and Temporal Illusions in E. Kochar Museum in Yerevan//Scientific papers of National University of Architecture & Construction of Armenia.- Yerevan, 2014.-Vol. IV (55).- P. 80 - 85:

5. ՔոչարԿ. Հ. Թանգարանային շենքերի նախագծմանն առաջադրվող հիմնական պահանջները//ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ.- Երևան, 2015.-Հ. I (56).- էջ63 - 75:

6. ՔոչարԿ. Հ. Թանգարանային շենքերի առանձնահատկություններն ըստ դրանց տիպերի և բնույթի//ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ.- Երևան, 2016.-Հ. II (61).-էջ 30 – 40:

7. Kochar K. Innovative Methods to organize cultural tourism in Yerevan//Proceedings of 7th International Conference Contemporary Problems of Arhitecture and Construction, - Florence – Italy, 2015.- P.707-712.

8. Kochar K. Ervand Kochar's relations with Georgian artists as reflected in the context of architectural modernization of Ervand Kochar Museum//Proceedings of 9th International Conference Contemporary Problems of Arhitecture and Construction, - Batumi – Georgia, 2017.- P.433-436.

КОЧАР КАРИНЕ АЙКАЗОВНА

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОГО РАЗВИТИЯ АРХИТЕКТУРЫ МУЗЕЕВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Музейная архитектура Армении до настоящего времени развивалась хаотически, часто руководствуясь идеалогическими установками, не связанными с общемировыми тенденциями и логикой развития музейной деятельности, и, как правило, основывалась на типовых решениях и нормативах, выработанных для обычного гражданского строительства. Хотя в последнее время предпринимались попытки преодоления сложившихся стереотипов и догм, однако этот процесс пока далек от завершения и протекает стихийно, эклектично, без четкого следования целям, особенностям и достижениям современной музейной архитектуры и музейного дела.

В исследовании была поставлена цель проанализировать и обобщить особенности развития музейной архитектуры в Армении, представить полную картину ее текущего состояния и накопившиеся проблемы, а также показать возможности для использования зарубежного опыта и современных достижений для развития музейной архитектуры.

Было выявлено, что в современной мировой музейной политике, в соответствии с произошедшими изменениями музееведческих и культурологических концепций, основными архитектурными требованиями, выдвигаемыми перед музейными строениями, являются:

презентация внутренней среды музея как «живого» информационного пространства с возможностью гибкой трансформации демонстрационных объемов; создание образа музея как мультифункционального центра посредством привлекательного дизайна внешней и внутренней среды, с использованием современных архитектурных композиций с облегченными и легко передвигаемыми строительными конструкциями.

В работе сделана попытка обобщения текущего состояния и тенденций развития архитектуры музеев мира, и на этом фоне проводится комплексный анализ и классификация архитектурной составляющей музеев Армении, обосновываются требования к строящимся музейным комплексам и сооружениям, а также даются рекомендации по модернизации уже имеющихся с учетом тенденций развития музейной архитектуры мира и современных строительных технологий.

В частности, впервые с целью сравнительного научного анализа осуществлено систематическое исследование архитектурного наследия музеев РА, его каталогизация и группирование по различным типам и категориям. Были исследованы распределения музеев по времени создания, географическому расположению, виду собственности, юридическому статусу, масштабу деятельности, профилю экспозиции, специализации, типу хранимого наследия, текущему состоянию, имеющимся проблемам. Особое внимание было уделено стилистическим и конструктивным решениям, особенностям архитектурной организации музейных зданий, функциональной организации внутренней среды, типу и качеству предоставляемых услуг.

В результате всестороннего исследования была сформирована соответствующая схема, полностью характеризующая 125 музеев Армении по их типу, характеру, особенностям архитектурной организации.

Показано, что решающим и важнейшим условием для сохранения музейного здания, максимального продления времени его морального старения является создание новой оперативной и, одновременно, эстетической среды путем гармонического сочетания современных архитектурных концепций планировки музейных зданий, новейших дизайнерских подходов и новейших технологий.

Сформулированы требования к музейному строительству, учитывающие мировой опыт и практику функционирования современных музеев, а также особенности местного исторического наследия и сложившихся культурных традиций. Практически у всех исследованных музеев выявлены несоответствия этим требованиям и наличие множества проблем. Обоснована необходимость разработки местных стандартов и критериев проектирования музеев на основе их соответствия международным нормам. На примере ряда музеев РА показано, что их модернизация требует решения однотипных задач, что позволило предложить несколько типовых моделей для их ремонта, реконструкции, расширения или приспособления. Также предложена универсальная модель функционального зонирования музейного пространства для модернизации существующих или проектирования новых музейных сооружений.

Теоретический материал исследования может быть использован в учебных курсах истории мировой и армянской современной музейной архитектуры, а также в исследованиях, предшествующих проектам модернизации или создания новых музейных сооружений в Армении.

KARINE HAYKAZ KOCHAR

PROBLEMS OF THE CONTEMPORARY ARCHITECTURAL DEVELOPMENT OF THE MUSEUMS OF THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The museum architecture of Armenia has hitherto developed chaotically, often guided by ideological attitudes that are not connected with the worldwide trends and logic of the development of museum activities, and, as a rule, was based on standard solutions and norms developed for ordinary civil construction. Although recent attempts have been made to overcome stereotypes and dogmas, this process is far from complete and spontaneous, eclectic, without following the goals, features and achievements of modern museum architecture and museum business.

The aim of the study was to analyze and generalize the features of the development of museum architecture in Armenia, to present a full picture of its current state and the accumulated problems, as well as to show the possibilities for using foreign experience and modern achievements for the development of museum architecture.

It was revealed that in the modern world museum policy, in accordance with the changes in museum and cultural concepts, the main architectural requirements put forward in front of the museum buildings are:

presentation of the museum's internal environment as a "living" information space with the possibility of flexible transformation of demonstration volumes; the creation of an image of the museum as a multifunctional center through an attractive design of the external and internal environment, using modern architectural compositions with lightweight and easily movable building structures.

In this work is made an attempt to generalize the current state and tendencies in the development of the world museum architecture, and against this background, a comprehensive analysis and classification of the architectural component of the museums of Armenia is conducted, justified the requirements for the construction of museum complexes and facilities, as well as recommendations for the modernization of existing with the consideration of the trends in the development of world museum architecture and modern building technologies.

In particular, for the first time for the purpose of comparative scientific analysis a systematic study of the architectural heritage of RA museums, its cataloging and grouping by various types and categories was carried out. The distribution of museums by creation time, geographical location, type of ownership, legal status, scale of activities, profile of exposition, specialization, type of stored heritage, current status, existing problems were

investigated. Particular attention was paid to stylistic and constructive solutions, the peculiarities of the architectural organization of museum buildings, the functional organization of the internal environment, the type and quality of the services provided.

As a result of a comprehensive study, a corresponding scheme was formed, fully characterizing 125 museums in Armenia according to their type, nature, and peculiarities of the architectural organization.

It is shown that the creation of a new operational and, at the same time, aesthetic environment through a harmonious combination of modern architectural conceptions of the layout of museum buildings, the latest design approaches and the latest technologies is the decisive and most important condition for preserving the museum building, maximizing the time of its moral aging.

Requirements are formulated for museum construction, taking into account the world experience and practice of functioning of modern museums, as well as features of local historical heritage and established cultural traditions. Virtually all the museums studied revealed inconsistencies to these requirements and the existence of many problems. The necessity of developing local standards and criteria for designing museums based on their compliance with international norms is substantiated.

On the example of a number of museums of the Republic of Armenia it was shown that their modernization requires the solution of the same tasks, which allowed to offer several standard models for their repair, reconstruction, expansion or adaptation. Also, a universal model of functional zoning of the museum space was proposed to modernize existing or design new museum structures.

The theoretical material of this research can be used in the training courses of the history of the world and Armenian modern museum architecture, as well as in studies preceding the modernization projects of the existing museums or the creation of new Museum facilities in Armenia.